ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԼԻԱՆԱ ԱՐԱԻԿԻ

ՀԱՅ ԿԻՆՆ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ (ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Թ.00.05 – «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մկրտչյան Սամվել Սուրենի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Նահապետյան Ռաֆիկ Ասքանազի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Միրզոյան Նարինե Զորիկի

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2025 թ. հունիսի 17-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ Կրոնագիտության 068 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան փողոց 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենք):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. մայիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արշակ Յուրիի Բալյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Ատենախոսության ուսումնասիրության առարկան, նպատակը և խնդիրները.</u> Հայ կնոջ առաքելության, դերի, գործառույթների քննարկումը, ընտանիքի համատեքստում դրանց փոխհարաբերությունների պատմաաղբյուրագիտական դիտարկումները, նրա դերակատարության և իրավունքների լուսաբանումը ամուսնական ավանդույթների և կանոնական իրավունքի ծիրից, ինչպես նաև առնչակից սոցիալ–տնտեսական և շատ այլ բնագավառներին վերաբերող հարցերի ու խնդիրների արծարծումն ու արժևորումը կրոնագիտական, եկեղեցաբանական, աստվածաբանական, պատմագիտական, մշակութաբանական, ազգագրական և իրավագիտական մեծ նշանակություն ունեն, քանի որ առաջնահերթ միտված են հումանիտար և հասարակական գիտությունների գիտական ուսումնասիրությանը և սերտորեն աղերսակից են գիտության բազմոլորտ բնագավառներին: Քննարկվող հիմնահարցերը կազմում են ***ատենախոսության ուսումնասիրության առարկան*** և մեծապես կարևորվել են այն տեսանկյունից, որ ներընտանեկան, ներազգային, ներեկեղեցական, սոցիալ–տնտեսական, հասարակական, քաղաքացիական, եկեղեցական, պետական դիտարկումներն ուղղակիորեն արտացոլում են հայ ժողովրդի ինքնության, ինքնագիտակցության, հոգեկերտվածքի դրսևորման ու զարգացման նկարագիրն ու հիմնախնդիրները պատմական քննարկվող ժամանակաշրջանների համատեքստում: Ուստի, բնական է, որ գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչներ հետազոտության առարկա են դարձրել ամուսնաընտանեկան հարցերի քննությունը: Այսպես՝ ամուսնության և ընտանիքի հիմնախնդիրը մշտապես եղել է ոչ միայն կրոնի, իրավունքի, այլև գիտական մտքի տարբեր ոլորտների ուշադրության և ուսումնասիրության կիզակետում: Մասնավորապես հիմնավոր է այն պնդումը, որ ամուսնությունը հասարակական պայմանագրի ինստիտուտ է: Այս հարցում մոտեցումն այն է, որ ամուսնության բազմաբնագավառ գործառույթը ամուսինների փոխադարձ իրավունքների և պարտականությունների սահմանումն է, նրանց անձնական հարաբերությունների կարգավորումը:

Քրիստոնեության մեջ մարդու արարման դրվագում կարևորվում է կնոջ դերակատարությունը՝ նախապես հատկանշելով նրան որպես ամուսնու օգնական, իսկ հայոց ազգային ավանդույթներում և եկեղեցաիրավամտածողության մեջ կինն առավելապես դիտարկվում է ամուսնության, ընտանիքի և մայրության համատեքստում, ինչն էլ դարձել է սույն ***ատենախոսության առանցքը***՝ հիմք ունենալով պատմաաղբյուրագիտական, կրոնագիտական, մշակութաբանական և եկեղեցաիրավական համապարփակ, համակողմանի և զուգադրական վերլուծությունը:

Հետազոտության ***նպատակն է*** վեր հանելու ամուսնաընտանեկան հարաբերություններում կնոջ դերակատարության, կոչման ու առաքելության ընկալումներն ու արժեհամակարգը, նրա իրավունքները, ինչպես նաև ժամանակի մշակութային առանձնահատկությունների մանրազնին վերլուծությունը: Ատենախոսության մեջ տեղ են գտել այնպիսի ***կարևոր խնդիրներ***, ինչպիսիք են, անչափահաս աղջիկների ամուսնությունը, աղջիկների առևանգումը կամ բռնի ամուսնությունները, այլադավանների հետ ամուսնության խնդիրը, մերձամուսնությունների հարցը, անպտղության, հղիության և որդեծնության հետ կապված տարբեր հարցեր, այրի կանանց կարգավիճակի և ամուսնությանն առնչվող խնդիրներ, որոնք ուրվագծում են հայոց ազգային, պատմաեկեղեցական, մշակութային նկարագիրը: Այս տեսակետից առանձնակի կարևորություն են ներկայացնում նշյալ թեմաների դիտարկումները ամուսնաընտանեկան ժողովրդական ավանդույթների և եկեղեցահիրավական համակարգի զուգադրական համապատկերում: Հետազոտության վերջնարդյունքին հասնելու համար ատենախոսությունն առաջադրել է ***հետևյալ խնդիրները***.

- ներկայացնել հայ կնոջ կերպարը ամուսնաընտանեկան հարաբերությունների և մայրության համատեքստում,
- ընդգծել ընտանիքի ստեղծման և նրանում կնոջ դերակատարության ու առաքելության կրոնական նշանակությունը. այն է՝ հիմնարար սկզբունքներով արժևորել նրա ստեղծումն ու կոչումը աստվածաբանության և կրոնագիտության դիրքերից,
- ներկայացնել հայ կնոջը կանոնական իրավունքի և ամուսնական ավանդույթների համադրության համապատկերում,
- նորովի մեկնաբանմամբ հարստացնել թեմայի ուսումնասիրության բնագավառում արդեն հայտնի փաստերն ու հետազոտական աշխատանքները,
- առանձնակի շեշտել հայ կնոջ դերակատարությունը ընտանիքի և ազգային ինքնության պահպանման գործընթացներում,
- ներկայացնել ներընտանեկան, ներազգային և ներեկեղեցական ավանդույթների համապատկերը տարաբնույթ աղբյուրների քննահամեմատական վերլուծությամբ,
- կատարել առկա աղբյուրագիտական աշխատանքների բովանդակային վերլուծություն, ցույց տալ այնտեղ արծարծվող ազգաբանական և եկեղեցահիրավական հարցերի շրջանակը,
- ուրվագծել հասարակության վերաբերմունքը կնոջ դերի, կոչման և իրավունքների նկատմամբ՝ պատմական զարգացման և ժամանակաշրջանի ծիրից,
- ներկայացնել մատենագրական աղբյուրներում կնոջ վերաբերյալ դիտարկումները,
- վեր հանել անչափահաս աղջիկների ամուսնության, ինչպես նաև աղջիկների առևանգման կամ բռնի ամուսնությունների հիմնախնդիրները,
- համակողմանի ներկայացնել այլադավանների հետ ամուսնության խնդիրը,

- քննարկել մերձամուսնությունների վերաբերյալ տարաբնույթ հարցեր,
- լուսաբանել անպտղության, հղիության և որդեծնության հետ կապված հարցերի պատմական զարգացումը,
- ներկայացնել միակնության և բազմակնության համակողմանի վերլուծություն,
- վեր հանել այրի կանանց կարգավիճակի և նրանց իրավունքների հիմնահարցերը:

<u>Թեմայի արդիականությունը.</u> Ընտանիքը և տիրող փոխհարաբերություններն իրենց ողջ խորությամբ մշտապես եղել են և կլինեն ***արդիական և կարևոր***, քանի որ ընտանիքն այն ինստիտուտն է, որտեղ անձի ձևավորման առաջին և ամենաարմատական հիմքերն են դրվում: Այս տեսակետից՝ կարևորվում են ընտանիքում կնոջ դերի և գործառույթների ուսումնասիրությունը և վերլուծությունը, ինչն այսօր խիստ արդիական է հատկապես այն առումով, որ մեր օրերում ամուսնական հարաբերություններում կնոջ կերպարը հաճախ կորցնում է իր դիմագիծը: Բացի այդ՝ ընտանիքն առաջնահերթ պետական ինստիտուտ է, և հայ ընտանիքը պետք է դիտարկել որպես ազգային ինքնության պահպանման հիմնասյուն՝ ընտանիք-պետության սյուները պահող, պահպանող իր հավատարիմ անդամներով և նրանց առաքելությամբ, որոնց թվում առանձնակի դերակատարություն ունի հայ կինը:

Այսպիսով՝ ատենախոսությունը նվիրված է հայ կնոջը՝ ամուսնաընտանեկան ավանդույթների և կանոնական իրավունքի դիտակետից՝ առնչակից հիմնախնդիրների հանգամանալից, նորովի և համակողմանի լուսաբանմամբ, ինչպես նաև նախկինում ձևավորված մոտեցումների վերարժևորմամբ կամ այլ տեսակետների ներկայացմամբ: Նշյալ հարցերին ևս մեկ անգամ անդրադառնալն ունի ***առանձնահատուկ կարևորություն և արդիական է***, քանզի գիտական ճանաչողության տեսակետից այն առնչակից գիտաճյուղերի՝ տվյալ դեպքում՝ ժողովրդական և կանոնական իրավունքի համատեքստում համադրական վերլուծությամբ դեռևս ամբողջովին ուսումնասիրված չէ: ***Թեմայի համակողմանի ուսումնասիրությունը***, հիմնվելով անտիպ ձեռագրական աղբյուրների, հրատարակված սկզբնաղբյուրների և առկա հետազոտական աշխատանքների վրա, հնարավորություն է ընձեռել լուսաբանելու թեմայի առանցքը կազմող կարևորագույն խնդիրներ, որոնք դիտարկվել են հայ ժողովրդական ավանդույթների կամ հայոց սովորութային իրավունքի և Հայոց եկեղեցու կանոնական իրավունքի տեսանկյունից: Ամուսնական տարատեսակ հարցերի քննարկման դաշտում շեշտը դրվել է կնոջն առնչվող դիտարկումներին, որոնք ***արդիական են նաև այսօր*** և պահանջում են արդի ժամանակներին համահունչ լուծումներ, իսկ առաջադրված բոլոր հարցերի վերաբերյալ տրվել են համակողմանի վերլուծություններ:

<u>Հետազոտության մեթոդաբանական հիմքը.</u> Թեմայի հետազոտման և շարադրման համար կարևորվել է այսօրինակ աշխատանքներին բնորոշ ***համադրական մեթոդը***՝ պահպանելով թեմային առնչվող բազմոլորտ նյութերի և՛ ժամանակագրական ճշտությունը,

և՛ իմաստային հաջորդականությունը, և՛ բովանդակության համապատասխանությունը: Արդյունքում՝ առաջադրվել են թեմայի շրջանակներում տեղ գտած խնդիրների առավել հստակ ***վերլուծություններ ու եզրակացություններ***: Նյութերի համադրման շնորհիվ կիրառվել է նաև ***համեմատական մեթոդը***՝ վեր հանելու կնոջ կերպարն ամուսնական իրավունքներին և պարտականություններին վերաբերող ժողովրդական ու սովորութային, ինչպես նաև եկեղեցական իրավունքի ընկալումների համապատկերում: Համադրական և համեմատական մեթոդների կիրառման շնորհիվ օգտագործվել է նաև ***քննավերլուծական մեթոդը***, որի արդյունքում ձևավորվել են թեմային առնչվող վերջնական եզրակացությունները: Ատենախոսությունը քննել և արժևորել է հավաքագրված փաստական նյութը, համադրել և համեմատել առկա ուսումնասիրություններն ու հրապարակված սկզբնաղբյուրները, վերանայել և վերարժևորել քննարկվող հիմնահարցերի հակասական ու իրարամերժ մոտեցումները և քննական-համեմատական վերլուծությունների միջոցով առաջարկել նոր լուծումներ:

<u>Ատենախոսության գիտական նորույթը.</u> Ատենախոսության գիտական նորույթի տարրերն են.

- Առաջին անգամ է ներկայացվում հայ կինն ամուսնական ավանդույթների և կանոնական իրավունքի զուգադրական համապատկերում:
- Ուրվագծվել են կնոջ կերպարը, դերակատարությունն ու առաքելությունը ներընտանեկան, ներազգային և ներեկեղեցական ավանդույթների փոխկապակցման համապատկերում՝ տարաբնույթ աղբյուրների համեմատական, քննական վերլուծությամբ:
- Աղբյուրների համակողմանի քննության արդյունքում առանձին շեշտադրմամբ քննական վերլուծության են ենթարկվել այլադավանների հետ ամուսնության խնդիրները՝ տվյալ ժամանակաշրջանի ուսումնասիրության դիտակետից:
- Գիտական անդրադարձ է կատարվել այրի կանանց կարգավիճակին և նրանց իրավունքների հիմնահարցերին:

Այսպիսով, ատենախոսության գիտական նորույթը հայ կնոջն առընչվող ամուսնաընտանեկան ավանդույթների ամբողջական և համակարգված կրոնագիտական վերլուծությունն է:

<u>Թեմայի ուսումնասիրության աստիճանը և գրականության տեսությունը.</u> Աղբյուրների տեսությունը ներկայացվում է թեմատիկ շարադրանքին համապատասխան:

Ատենախոսության շարադրման համար օգտագործվել են հիմնականում սկզբնաղբյուրներ, պատմամատենագրական աղբյուրներ և պատմագիտական, ազգագրական, եկեղեցագիտական և կրոնագիտական հետազոտություններ: Ուսումնասիրության առաջին գլխում աստվածահաստատ ամուսնության ակունքների վկայաբերման համար կարևոր սկզբնաղբյուր է Աստվածաշունչ մատյանը:

Աղբյուրագիտական մեծ արժեք ունեն Ներսես Լամբրոնացու մեկնություններից[1] բերված քաղվածքները, որոնք բնութագրում են հայ կնոջը և նրա կերպարը: Առավելապես օգտագործվել են հույն փիլիսոփա Պլուտարքոսի երկերը[2]: Ատենախոսության կազմման համար խիստ շահեկան և աղբյուրագիտական կարևորություն ունի մամուլի գործածումը՝ հիմնականում Ռաֆֆու[3] խորհրդածությունները:

Ս. Պսակի աստվածաբանական նշանակության և մատենագրական աղբյուրների հետազոտության նպատակով օգտագործվել են Ս. Պսակի խորհրդի վերաբերյալ Ե–ԺԸ դդ. հայ մատենագիրների խորհրդածություններն ու վերլուծական բնագրերը, ինչպես նաև կազմող Հ. Քյոսեյանի ընդարձակ և արժեքավոր ներածությունը[4]:

Առաջին գլխի ուսումնասիրության համար որպես հիմնական սկզբնաղբյուրներ օգտագործվել են «Կանոնագիրք Հայոց»[5] ժողովածուն, Դավիթ Ալավկա որդու «Կանոնական օրինադրությունը»[6], Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքերը[7], ինչպես նաև Ա. Աբրահամյանի «Դավիթ Ալավկա Որդու կանոնները» հոդվածների շարքը[8], Ն. Մելիք-Թանգեանի «Հայոց եկեղեցական իրավունքը» գիրքը[9]:

---

[1] **Ներսես Լամբրոնացի,** Մեկնութիւն Ժողովողի, Մեկնութիւն Իմաստութեանն Սողոմոնի, Հին կտակարանի գրքերի մեկնություններ, աշխ.՝ Գենադի Ս. Մնացականյանի, Երևան, 2009:

[2] **Պլուտարքոս,** Երկեր, Երևան, 1987:

[3] **Ռաֆֆի**, Հայ կինը / «Մշակ» գրականական եւ քաղաքական լրագիր, համար 34-39, 41-43, Թիֆլիս, 1879:

[4] **Հայ մատենագիրները Սուրբ Պսակի խորհրդի մասին** (Ե.- ԺԸ. դարեր), կազմեց՝ **Քէօսէեան Յ.Ս.** Էջմիածին, 2022:

[5] **Կանոնագիրք Հայոց,** աշխ.՝ **Վ. Հակոբյանի**, հատոր Ա, Երևան, 1964, հատոր Բ, Երևան, 1971:

[6] Դաւիթ վարդապետ Ալաւկա որդի, որ գրեաց զկանոնական աւրէնսդրութիւնս, աշխ.՝ **Պ.Հ. Յովհաննիսեանի,** «Մատենագիրք Հայոց», ԺԶ հատոր, ԺԱ դար, Երևան, 2012, էջ 675–723:

[7] **Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, աշխ.՝ **Խ. Թորոսյանի**, Երևան, 1975, **Սմբատ Սպարապետ (Գունդստաբլ)**, Դատաստանագիրք, Երևան, 2008:

[8] **Աբրահամյան Ա.,** Դավիթ Ալավկա Որդու կանոնները / **«Էջմիածին»** ամսագիր, Երևան, 1952, համար Թ-Ժ, էջ 48-58, համար ԺԱ-ԺԲ, էջ 56-67, **«Էջմիածին»** ամսագիր, Երևան, 1953, համար Ա, էջ 56-63, համար Բ, էջ 53-60, համար Գ, 51-63:

[9] **Մելիք-Թանգեան Ն. Վ.**, Հայոց եկեղեցական իրավունքը, Գիրք Ա, Բ, Ս. Էջմիածին, 2011:

Ատենախոսության երկրորդ գլխի համար հիմնականում օգտագործվել են Ե. Լալայանի[10], Խ. Սամուելյանի[11], Ա. Ղլտչյանի[12], Ս. Հովհաննիսյանի[13], Ռ. Նահապետյանի[14] և այլոց ուսումնասիրությունները:

---

[10] **Լալայեան Ե.,** Ջաւախք, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն և հարսանեաց սովորոյթներ / **ԱՀ,** Գիրք Ա, Շուշի, 1896, էջ 232-264, **նույնի՝** Ջաւախք, Ընտանեկան բարք, Ընտանեկան կեանք/ **ԱՀ,** Գիրք Ա, Շուշի, 1896, էջ 277-288, **նույնի՝** Ջաւախք, Ընտանեկան բարք. Տղաբերք և կնունք / **ԱՀ,** Գիրք Ա, Շուշի, 1896, էջ 265-275, **նույնի՝** Վարանդա, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ / **ԱՀ,** Գիրք Բ, Թիֆլիս, 1989, էջ 113-144, **նույնի՝** Ձանգեզուր, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ / **ԱՀ,** Գիրք Դ, Թիֆլիս, 1897, էջ 66-84, **նույնի՝** Գանձակի գաւառ, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ / **ԱՀ,** Գիրք Զ, Թիֆլիս, 1900, էջ 242-269, **նույնի՝** Բորչալուի գաւառ, Ամուսնութիւն և հարսանիքի սովորութիւններ / **ԱՀ,** Գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 212-245, **նույնի՝** Բորչալուի գաւառ, Նահապետական գերդաստան / **ԱՀ,** Գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 119-129, **նույնի՝** Բորչալուի գաւառ, Ընտանիք / **ԱՀ,** Գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 130-137, **նույնի՝** Վայոց Ձոր, Ազգագրութիւն / **ԱՀ,** Գիրք 14, Թիֆլիս, 1906, էջ 133-155, **նույնի՝** Վասպուրական, Ծիսական կարգերը հայոց մէջ / **ԱՀ,** Գիրք 21, Թիֆլիս, 1911, էջ 165-169, **նույնի՝** Վասպուրական, Հաւատք. Լեռների, քարի, ջրի, բոյսերի, կենդանիների, կրակի, արևի, շէմքի, նախնիների, ոգիների պաշտամունք / **ԱՀ,** Գիրք 25, Թիֆլիս, 1913, էջ 21-60, **նույնի՝** Վասպուրական, Ծիսական կարգերը հայոց մէջ. Ըստ Հ. Սպենսերի / **ԱՀ,** Գիրք 26, Թիֆլիս, 1916, էջ 211-219, **նույնի՝** Մուշ-Տարոն. Ազգագրութիւն, Գիրք 26, Թիֆլիս, 1916 էջ 148-194:

[11] **Սամուէլյան Խ.**, Առևանգմամբ և գնմամբ ամուսնութիւն / **ԱՀ,** Գիրք 12, Թիֆլիս, 1904, էջ 40-83, **նույնի՝** Հայ ընտանեկան պաշտամունքը / **ԱՀ,** Գիրք 13, Թիֆլիս, 1906, էջ 112-130, **նույնի՝** Հայ ընտանեկան պաշտամունքը / **ԱՀ,** Գիրք 14, Թիֆլիս, 1906, էջ 156-174, **նույնի՝** Հայոց ժառանգական իրավունքը / **ԱՀ,** Գիրք 15, Թիֆլիս, 1907, էջ 68-84, **նույնի՝** Մայրական իրավունքը (տեսութիւն հայ սովորութական իրաւունքից) / **ԱՀ,** Գիրք 17, Թիֆլիս, 1908, էջ 126-141, **նույնի՝** Մայրական իրաւունքը (տեսություն հայ սովորութական իրաւունքից) / **ԱՀ,** գիրք 19, Թիֆլիս, 1910, թ. 1, էջ 35-58:

[12] **Ղլտչեան Ա.,** Ամուսնութեան, ամուսնալուծութեան, ծնողների, որդոց եւ ամուսինների քաղաքաց. իրավունքների մասին պետական օրէնքներ. Հայոց եկեղեցու կանոններ. Ամուսնալուծական դատաւարութիւն, Ալեքսանդրապոլ, 1904, **նույնի՝** Ամուսնութիւն, ամուսնալուծութիւն և քաղաքացիական պսակ, Ալեքսանդրապոլ, 1904, **նույնի՝** Հայ հին իրաւունքը. Առաջաբան / **ԱՀ,** Գիրք 22, թ. 1, Թիֆլիս, 1912, էջ 5-36, **նույնի՝** Առաջին մաս. Հայկական ընտանիքի կազմակերպութիւնը / **ԱՀ,** Գիրք 22, Թիֆլիս, 1912, էջ 37-60, **նույնի՝** Ամուսնական իրաւունք / **ԱՀ,** Գիրք 24, Թիֆլիս, 1913, էջ 5-50:

[13] **Հովհաննիսյան Ս. Հ.,** Ամուսնա–ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV-IX դդ.), Երևան, 1976:

[14] **Նահապետյան Ռ.**, Ազգաբանական ուսումնասիրություններ, Գիրք 3, Երևան, 2020, **նույնի՝** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի Հայոց պատմություն երկում, Երևան, 2013, **նույնի՝** Ակնարկներ աղձնիքահայերի սնոտիապաշտական նախապաշարումների մասին / **«Էջմիածին»** ամսագիր, համար Ա, Ս. Էջմիածին, 2010, էջ 67-75, **նույնի՝** Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, Երևան, 2007, **նույնի՝** Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը. Պատմաազգագրական ուսումնասիրություն, Երևան, 2011, **նույնի՝** Ամլությունը բուժելու ժողովրդական հնարներն ու հավատալիքներն Աղձնիքում / **«Էջմիածին»** ամսագիր, Ե, Ս. Էջմիածին, 2009, էջ 78-86, **նույնի՝** Ամուսնաընտանեկան հարաբերությունների արտացոլումը «Սասնա ծռեր» էպոսում / **«Ակունք»,**

Առնչակից հարցերի քննության համար օժանդակ աղբյուրներ են հանդիսացել Առաքել Դավրիժեցու «Պատմություն»[15], Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն»[16] պատմական երկերը, Հովհան Մանդակունու ճառերը[17], Հովհան Ոսկեբերանի «Ճառերի ընտրանին»[18] և Հովհաննես Երզնկացու «Խրատ բոլոր քրիստոնեաներուն» աշխատությունը[19]: Աղբյուրագիտական մեծ արժեք ունի նաև Ներսես Շնորհալու «Թուղթ Ընդհանրական»[20]-ը: Առանձին հարցերի քննության համար գործածվել են եկեղեցական վավերագրերը[21]:

Թեմայի շարադրման համար օգտագործվել է նաև Ս. Մկրտչյանի «Հայոց տոնածիսական մշակույթը» արժեքավոր աշխատությունը[22]: Որպես անտիպ սկզբնաղբյուրներ՝ գործածվել են երեք գրչագրեր՝ *1. ՄՄ, Հմր 2858, Յակոբ Նալեան, Կրթութիւն ասպուածաբանական խորհրդոցն եկեղեցւոյ, 8/354բ-479ա, 2. ՄՄ Հմր 641, Ղրիմեցի Յ., Յաղակս ազգականութեան, 254ա-258բ, 3. ՄՄ Հմր 655, Ղրիմեցի Յ., Յաղակս խնամութեան, 36ա-45ա,* որոնք, հաղորդելով արժեքավոր տվյալներ, նպաստել են ատենախոսության թեմայի բազմակողմանի ուսումնասիրությանը:

<u>Ատենախոսության գործնական-կիրառական նշանակությունը.</u> Ատենախոսությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ գործնական-կիրառական կարևոր նշանակություն: Քննարկվող հիմնական թեմաներն ու խնդիրները՝ որպես առանձին դրույթներ, ***տեսական և ճանաչողական տեսանկյունից*** կարող են օգտակար լինել պատմագիտական, կրոնագիտական, աստվածաբանական, իրավագիտական և

2018, էջ 5-21, **նույնի՝** Հայոց սոցիանորմատիվ մշակույթը, Մաս 1, Երևան, 2009, **նույնի՝** Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 2018, **նույնի՝** Որդեծնության սովորույթներին ու ծեսերին առնչվող հավատալիքները հայոց մեջ XIX դարի վերջին-XX դարի սկզբին (ըստ աղձնիքահայերի ազգագրական նյութերի) / **«Էջմիածին»** ամսագիր, Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2006, Բ-Գ, էջ 94-107:

[15] **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, Երևան, 1988:

[16] **Փավստոս Բուզանդ,** Պատմություն հայոց, Երևան, 1968:

[17] **Հովհան Մանդակունի**, Ճառեր, Ս. Էջմիածին, 2021:

[18] **Սուրբ Հովհան Ոսկեբերան**, Ճառերի ընտրանի, Ս. Էջմիածին, 2009:

[19] **Հովհաննես Երզնկացի,** Խրատ բոլոր քրիստոնեաներուն, Անթիլիաս, 1984:

[20] **Ներսես Շնորհալի**, Ընդհանրական Թուղթ Սրբոյն Ներսիսի, Յերուսաղէմ, 1871:

[21] **Գէորգ Զ Չորէքչեան, Կաթողիկոս Ամենայն Հայոց (1938-1955) / Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմության,** կազմող՝ Ս.Ա. Բեհբուդյան, Գիրք Զ, Երևան, 1999, **Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան (1904-1989.) / Վաւերագրեր հայ եկեղեցու պատմության,** կազմող՝ Ս.Ա. Բեհբուդյան, Գիրք ԺԲ, Ս. Էջմիածին, 2004, **Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան Կոստանդնուպոլսի պատրիարք (1896-1908) / Վաւերագրեր հայ եկեղեցու պատմության,** Կազմ.՝ Ս. Ա. Բէհբուդեան, Գիրք ԺԶ, Երևան, 2006, **Գեւորգեան ճեմարան, թանգարան, «Արարատ» ամսագիր, Փաստաթղթերի ժողովածու / Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան,** կազմեց Գ . Աւագեան, Գիրք ԺԷ, Ս. Էջմիածին, 2018:

[22] **Մկրտչյան Ս.,** Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016:

մշակութաբանական ուսումնասիրությունների համար, իսկ ***կիրառական*** տեսակետից՝ մեծ հետաքրքրություն կարող են առաջացնել գիտահետազոտական ինստիտուտներում և կենտրոններում առնչակից գիտակարգերի շրջանակներում (պատմություն, բանասիրություն, իրավագիտություն, հասարակագիտություն, մշակութաբանություն և այլն) ուսումնասիրություններ կատարելու համար, ինչպես նաև կարող են օգտագործվել բուհական կրթական համակարգում դասավանդվող տարատեսակ առարկաների դասավանդման ընթացքում: Սույնով ընդգծվում է նաև ատենախոսության ***գիտագործնական նշանակությունը***. այն է՝ ներկայացված հիմնախնդիրների լուսաբանմանումը, վերլուծություններն ու գիտական լուծումները կարող են օգտակար լինել ընդգրկող բազմոլորտ գիտակարգերի ուսումնասիրության տեսակետից:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի գիտական խորհրդում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Կրոնագիտության ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները արտացոլված են հեղինակի կողմից Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից երաշխավորված ամսագրերում հրատարակված ինը հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը. Թեկնածուական ատենախոսությունը կազմված է *ներածությունից, երկու գլխից*, *եզրակացությունից*, *սկզբնաղբյուրների և գրականության ցանկից*: Ենթագլուխների բաժանումը կատարվել է աշխատանքը համակարգված ձևով ներկայացնելու սկզբունքով:

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության ուսումնասիրության առարկան, նպատակը և խնդիրները, թեմայի արդիականությունը, հետազոտության մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, թեմայի ուսումնասիրության աստիճանը և գրականության տեսությունը, ատենախոսության գործնական-կիրառական նշանակությունը:

«Հայ կնոջ ամուսնական կարգավիճակը կանոնական իրավունքի համապատկերում» խորագիրը կրող առաջին գլխում ներկայացված են տասը ենթագլուխներ՝ *1.1. Ընտանիքի սուրբգրային ակունքները. կինն Աստվածաշնչում և մատենագրական աղբյուրներում, 1.2. Կնոջ ամուսնական կարգավիճակը կանոնական իրավունքում, 1.3. Չափահասության խնդիրն ամուսնության համատեքստում հայոց եկեղեցական իրավունքի տեսանկյունից, 1.4. Միակնության և բազմակնության հարցերն ըստ կանոնական իրավունքի, 1.5. Բռնի ամուսնությունների վերաբերյալ կանոնական որոշումները, 1.6. Մերձամուսնությունների խնդիրը հայոց եկեղեցական իրավունքի տեսանկյունից, 1.7. Այլադավանների հետ ամուսնության հարցը, 1.8. Խնամախոսության և նշանադրության կանոնական դրսևորումները հայոց մեջ, 1.9. Ամուսնալուծությունն ըստ*

կանոնական իրավունքի, 1.10. Այրի կանանց կարգավիճակը հայոց եկեղեցական կանոնների համատեքստում:

Քննարկվող գլուխը տալիս է պատմաաղբյուրագիտական վերլուծություն՝ եկեղեցաիրավական հուշարձանների ուսումնասիրության շրջանակներում: Պատմիչների աշխատությունների, եկեղեցական ժողովների կանոնների, միջնադարյան հեղինակների կանոնագրքերի, հայ եկեղեցու նոր շրջանի գործիչների կողմից սահմանված կանոնադրությունների համակողմանի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում վերընշված ենթագլուխներում տեղ գտած խնդիրների վերաբերյալ տրվել է ընդհանրական համապատկեր:

Երկրորդ գլուխը՝ «**Կինը հայ ժողովրդական ամուսնական ավանդույթների համատեքստում»** վերտառությամբ, բաղկացած է ութ ենթագլխից՝ *2.1. Ընտանիքի և ընտանեկան ավանդույթների զարգացումը (պատմական ակնարկ), 2.2. Ամուսնության համար չափահասության խնդիրը հայոց սովորութային իրավունքի տեսանկյունից, 2.3. Բռնի ամուսնությունների ժողովրդական դրսևորումները, 2.4. Խնամախոսության և նշանադրության ավանդույթները հայոց մեջ, 2.5. Հարսանեկան ծիսաշար, 2.6. Երեխայի ծնունդը հայոց կրոնական ու ժողովրդական ավանդույթների համատեքստում, 2.7. Այրի կանանց կարգավիճակը հայոց սովորութային իրավունքի տեսանկյունից, 2.8. Հայ կնոջ կարգավիճակի փոփոխություններն ընտանեկան հարաբերություններում:*

Սույն գլուխը ներկայացնում է հայ կնոջ կարգավիճակի փոփոխությունները հայոց սովորութային իրավունքի տեսանկյունից, ամուսնության և ընտանիքի ձևավորման սուրբգրային աղբյուրները և կնոջ կոչումն ու առաքելությունը մատենագրական աղբյուրներում, ինչպես նաև նրա կերպարի վերաբերյալ տեսակետները: Քննական վերլուծության են ենթարկվում այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ ընտանիքի ձևավորման պատմական զարգացումը, անչափահաս աղջիկների ամուսնությունների անդառնալի հետևանքները, փոխադարձ համաձայնության բացակայության պայմաններում ամուսնությունների կատարումը, խնամախոսության, նշանադրության և հարսանեկան արարողակարգերը, երեխայի ծննդյան և դաստիարակության հարցերին առնչվող տարաբնույթ խնդիրներ: Արժեքավոր են հատկապես այրի կանանց կարգավիճակի և իրավունքների ժողովրդական ըմբռնումները: Վերլուծության են ենթարկվել առանցքային բովանդակային խնդիրներ:

Եզրակացություններ բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքերը և եզրահանգումները:

Քրիստոնեական ընտանիքի ձևավորման ակունքները գալիս են Աստվածաշնչից՝ արարչագործությունից, երբ Աստված ստեղծեց մարդուն՝ արու և էգ, և նրանց պատվիրեց աճել և բազմանալ՝ օրհնելով նրանց միությունը. *«...Եւ Աստուած մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց: Աստուած օրհնեց նրանց ու ասաց. Աճեցէ՛ք, բազմացէ՛ք, լցրէ՛ք երկիրը...»* (Ծննդոց 1:27-28): Աստված Ադամի կողոսկրից արարեց կնոջը, որպեսզի նրանք մեկ մարմին լինեն մինչև կյանքի վերջ, և ամրապնդեց նրանց միությունը՝ ամրագրելով, որ ամուսնությունը երկու անձանց միաձուլումն է որպես անբաժանելի մարմին. *«...Տէր Աստուած Ադամից վերցրած կողոսկրից կին արարեց եւ նրան բերեց Ադամի մոտ: Ադամն ասաց. «Այժմ՝ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչուի կին, որովհետեւ իր ամուսնուց ստեղծուեց»: Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հօրն ու մօրը՝ պէտք է միանայ իր կնոջը, եւ երկուսը պէտք է լինեն մի մարմին: Եւ երկուսն էլ՝ Ադամն ու իր կինը, մերկ էին ու չէին ամաչում»* (Ծննդոց 2:22-25):

Աստծո օրհնությունը ոչ այլ ինչ էր, քան պսակադրության արարողություն: Այս առումով բավական հատկանշական են Խրիմյան Հայրիկի խոսքերը. *«Այսպէս աւարտեցաւ Դրախտին հարսանիքը, որոյ պսակադիր Քահանայն Աստուած էր, Եկեղեցին Դրախտն էր, Խաչ եւ Աւետարան Կենաց ծառն էր»*[23]:

Մարդու արարումը ընտանիքի ստեղծման հիմքն է, որն իր շարունակական արտահայտությունն է գտել որդեծնության մեջ[24]: Մարդու ժառանգական բնական սերումն էլ պայմանավորված է կնոջով, ում արարումը Ա. Տեր–Միքելյանը բնորոշում է որպես տղամարդուն հավասար և նրա սիրալիր օգնականը լինելու պատվով. *«Աստուծո հայտնությունը կատարելապես դյուրահասկանալի է դարձնում այդ հավասարությունը նոցա կողակցության գաղափարով, որ միևնույն ժամանակ պարունակում է յուր մեջ հավասարության հիմնաքար միությունը...Սակայն կինը, ըստ տղամարդի հառաջնության (Ծնն. Բ 21) և ըստ յուր դյուրախաբության (Գ 7-16), նորա տիրության պէտք է զիջանի, միայն թե սիրո սկզբունքի հիման վրա...»*[25]:

Ուշագրավ է քննարկվող խորհրդի հաստատման և հիմնակարգման ակունքների ներկայացմամբ Ս. Պսակի խորհրդի վերաբերյալ Ե–ԺԸ դդ. հայ

---

[23] **Խրիմյան Հայրիկ,** Երկեր, Երևան, 1992, էջ 188:

[24] Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Պապայան Ռ.**, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Ս. Էջմիածին, 2002, էջ 147-175, նաև՝ տե՛ս **Աբրահամյան Ս.**, Աստվածաշունչը որպես ընտանեկան իրավունքի սկզբնաղբյուր, Երևան, 2013, էջ 8-20, **Միրզոյան Ն.**, Պատերազմի և գերության թեմատիկան Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» երկում / **«Գիտական Արցախ»,** Երևան, 2021, թ. 4 (11), էջ 90-91:

[25] **Տեր-Միքելյան Ա.**, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, Ս. Էջմիածին, 2007, էջ 107:

մատենագիրների խորհրդածություններն ու վերլուծական բնագրերն ուսումնասիրող և մեկնաբանող Հ. Քյոսեյանի բնութագրումը ժողովածուի ընդարձակ և արժեքավոր ներածության մեջ. *«Այսու Սրբազան Մատեանում նկարագրուածը ցոյց է տալիս, որ երկու անձանց միաւորումը արդիւնքը չէ նրանց քմածին, փոխշահաւէտ որոշման, այլ՝ Աստծոյ օրինակարգութեան, այն է՝ ամուսինների բնազանցական միութեան»*[26]:

Աստվածահաստատ ընտանիքի գաղափարը հիմնավորապես թափանցել է հայոց կանոնական իրավունքի և աշխարհիկ օրենսդրության մեջ: Բացի այդ՝ ընտանիքը հայ ժողովրդի ինքնության պահպանման հիմնասյուներից մեկն է: Ելնելով այս կարևոր սկզբունքներից՝ եկեղեցին որդեգրել է ամուսնության վերաբերյալ աստվածային պատգամները և մշտապես սահմանել ամուսնաընտանեկան կանոններ[27]: Պսակի սուրբ խորհուրդ լինելը ցույց է տալիս, որ ամուսնությունը չի կարող մասնավոր անհատական նպատակ ունենալ: Եթե այդպես լիներ, այն չէր համեմատի Քրիստոսին և եկեղեցուն: Ընտանիքը պետք է լինի բարոյական աշխարհի փոքրիկ նկարը կամ մանրաշխարհը[28]:

Եկեղեցին, ընդունելով ամուսնությունն իբրև իր սրբազան խորհուրդ, անհրաժեշտ պայման է սահմանում կատարել ամուսնությունը միայն արուի և էգի, այսինքն՝ տղամարդու և կնոջ միջև[29], քանզի Քրիստոսն ինքը վերահաստատեց Հին օրենքը. արարչագործության սկզբից Աստված արու և էգ ստեղծեց նրանց և ասաց, որ դրա համար տղամարդը պիտի թողնի իր հորն ու մորը և գնա իր կնոջ հետևից, և երկուսը մեկ մարմին պիտի լինեն, իսկ Աստծու միավորածը մարդը չպետք է բաժանի. *«...մինչդեռ արարչագործութեան սկզբից Աստուած արու եւ էգ ստեղծեց նրանց: Եվ ասաց. «Դրա համար տղամարդը պիտի թողնի իր հօրն ու մօրը եւ պիտի գնայ իր կնոջ յետեւից: Եւ երկուսը մի մարմին պիտի լինեն, եւ այլեւս երկու չեն, այլ՝ մէկ մարմին: Արդ, ինչ որ Աստուած միացրեց, մարդը թող չբաժանի»...»* (Մարկ. 10:6-10):

Պսակի սրբազան խորհրդի հետաքրքրական և առանձնահատուկ բնորոշումներին ենք հանդիպում Հայոց եկեղեցու ականավոր գործիչ, հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի երկերում: Ամուսինների սրբազան միության ուշագրավ հատկանշում է մեծ մտավորականի հետևյալ խորհրդածությունը. *«Առաջին հարսանիքը տեղի ունեցավ դրախտում, որի պսակադիր քահանան Աստված էր, Եկեղեցին դրախտն էր, խաչն ու ավետարանը կենաց ծառն էր... Առաջին ընտանիքն ահա այսպես կազմեց Տեր Աստված.*

---

[26] Հայ մատենագիրները Սուրբ Պսակի խորհրդի մասին (Ե.- ԺԸ. դարեր), կազմեց՝ **Քէօսէեան Յ.,** էջ 5:

[27] Այս մասին առավել հանգամանալից տե՛ս **Հովհաննիսյան Ս. Հ.,** նշվ. աշխ., էջ 122-146:

[28] **Տէր-Միքելեան Ա.,** Պսակի սուրբ խորհուրդը / **«Արարատ»,** ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական եւ բարոյական գիտելեաց, ԻԷ, թ.Բ, Վաղարշապատ, 1894, էջ 39:

[29] Տե՛ս **Բաստամեանց Վ.,** Կանոնագիտական երկեր, աշխատ.՝ Ա. Բոզոյանի, Ս. Էջմիածին, 2015, էջ 249:

օրհնեց իր արարչական Աջով նորապսակ ամուսիններին ու անխզելի սիրով կապեց նրանց այնքան ամուր ու անբաժանելի, որ մինչև իսկ հորն ու մորը թողնեն և ամուսնու հետևից գնան»[30]:

Կնոջ արարումը համարվում է մարդու արարման[31] վերջնական ավարտը: Հայ եռամեծ վարդապետ Գրիգոր Տաթևացին կնոջը համեմատում է ծովի հետ, որի մեջ լցվում են բազում գետեր «... և կինն որպէս ծով առ որ ժողովին գետք»[32], քանզի կինն իր բնությամբ համարվում է սնուցող, ժողովող և համախմբող:

Մաշտոց ծիսամատյանում Պսակի օրհնության կանոնով մեջբերվում է առաջին կնոջ արարման պահը. *«Եւ արկ Տէր Աստուած զթմբրութիւն ի վերայ Ադամայ, եւ ննջեաց, եւ առ մի ի կողիցն նորա եւ ելից ընդ այնր մարմինն: Եւ շինեաց Տէր աստուած զկողն, զոր առ յԱդամայ ի կինն, եւ ած զնա առ Ադամ: Եւ ասէ Ադամ. Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց եւ մարմին ի մարմնոյ իմոյ է. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ»*[33]:

Հին օրենքով Աստված հաստատեց ամուսնությունը դրախտի մեջ՝ իբրև մի սրբազան շաղկապ նախահայր Ադամի և նախամայր Եվայի միջև՝ ամուսնության համար սահմանելով երկու գլխավոր նպատակ՝ բարոյական՝ փոխադարձ սեր և անբաժանելի միություն, և նյութական՝ մարդկային ցեղի աճը: Իսկ Քրիստոսը, լրացնելով և կատարելագործելով ընդհանրապես հին օրենքը նոր օրենքով, լրացրեց և սրբազնացրեց ամուսնությունը[34]:

Շեշտելի է Սուրբ Գրքի այն իրողությունը, որ տղամարդը, թողնելով իր հորն ու մորը, իր կնոջը պետք է միանա, և երկուսը մեկ մարմին պետք է լինեն, այսինքն՝ որպես աստվածային պատկերի և մարդկային պատվի կրողներ՝ կնոջ և տղամարդու արարումն ամբողջանում և կատարյալ է դառնում սիրո միության մեջ: Իսկ այդ սիրո միությունն ինքնարտահայտության բարձրագույն աստիճանին է հասնում մարդկային ցեղի շարունակության, այն է՝ որդեծնության պատգամով: Այդպիսով ընդգծվում է ամուսնության աստվածաբանական նշանակությունը և կնոջ դերակատարությունն ու առաքելությունը աստվածահաստատ ընտանիքի՝ Քրիստոսապատվեր կյանքով ապրելու գործառույթների սրբազան նվիրագործումով:

---

[30] **Խրիմյան Հայրիկ**, Դրախտի ընտանիք, Ս. Էջմիածին, 2011, էջ 16-17:

[31] Մարդու արարումը միաժամանակ արարումն էր ընտանիքի՝ որպես մարդու կենսաձև: «Մարդ» հասկացությունը եբրայերենում արտահայտված է **dm** բառով, որը երկու նշանակություն ունի. մարդ՝ ընդհանրապես, կամ ամուսնական զույգ: Առավել ընդունելի է հիշատակված բառի երկրորդ իմաստը՝ ամուսնական զույգ: Տե՛ս **Պապայան Ռ.,** նշվ. աշխ., էջ 149:

[32] **Գրիգոր Տաթևացի,** Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, Վերատպեալ ի տպարանի Սրբոյ Յակոբեանց, Երուսաղեմ, 1998 թ. էջ 196:

[33] **Մայր Մաշտոց**, Գիրք Ա, Ս. Էջմիածին, 2012, էջ 238: Տե՛ս նաև՝ Ծննդոց, 2:21-23:

[34] **Բաստամեանց Վ.,** նշվ. աշխ., էջ 242:

Տպագիր սկզբնաղբյուրների և հրապարակային ուսումնասիրությունների համակողմանի և համալիր հետազոտության արդյունքում արվել են հետևյալ եզրակացությունները՝

- Հայոց մեջ ամուսնության և ընտանիքի պահպանման գործում կնոջ առաքելությունն ու դերակատարությունն ունի աստվածաբանական նշանակություն. նրա արարումն ու կոչումը գալիս են աստվածաշնչյան ակունքներից: Կնոջ արժևորման և դերակատարության կարևորության հիմքերն առկա են սուրբգրական աղբյուրներում: Ուստի ընտանիքի՝ որպես հասարակության գլխավոր հիմքի, սկզբնավորումը, զարգացումը, ընթացքը, և, առհասարակ, ողջ գոյությունը պետք է հիմնված լինի աստվածային օրենքների վրա: Աստվածաշնչյան օրենքների ներթափանցման և ամրապնդման արդյունքնում վերջնականապես հաստատվեց մենամուսնության գաղափարը: Սա կարելի է հստակ համարել քրիստոնեական սուրբգրային դրույթների կարևորագույն հաղթանակը ամուսնությանն առնչվող հարցերում, որից էլ բխում են մյուս բոլոր խնդիրների լուծումները, որոնք տեղ են գտել սուրբգրային օրենքների շրջանակում: Ամուսնության և ընտանիքի պատմական զարգացման ուսումնասիրության արդյունքում ևս մեկ անգամ ընդգծվեց անհատական ընտանիքի առաջացման խիստ անհրաժեշտությունն ու կարևորությունը: Քրիստոնեությունը առավել կարգավորված ընթացք հաղորդեց ընտանիքի անհատական մոդելին՝ ամրապնդելով միակնության հիմքերը: Հենց մենամուսնության հաստատմամբ է, որ կինը վերարժևորվել և ձեռք է բերել բոլորովին այլ դրություն ամուսնության կարևոր ինստիտուտում:
- Ամուսնական ավանդույթների և կանոնական իրավունքի համադրության համապատկերում հայ կնոջ կերպարի վերհանմանն ուղղված պատմաքննական և համեմատական հետազոտությունների արդյունքում կարելի է եզրակացնել, որ հայոց մեջ ամուսնաընտանեկան ավանդույթում, կանոնական իրավունքի մեջ և մատենագրական աղբյուրներում կնոջ դերը, առաքելությունն ու իրավունքները դիտարկելի են տարբեր տեսանկյուններից և առաջադրել են տարբեր հիմնախնդիրներ:
- Հայոց ամուսնական ավանդույթներում արմատացած են եղել մի շարք սովորութային դրսևորումներ, որոնք հակասել են քրիստոնեական արժեհամակարգին: Հայերի ամուսնական կենցաղ թափանցած շատ երևույթներ չէին կարող ընդունելի լինել հայոց եկեղեցաիրավամտածողության տեսանկյունից: Այդպիսի երևույթերից էին օրինակ անչափահաս աղջիկների ամուսնությունը, բռնի ամուսնությունները, մերձամուսնության դրսևորումները, կնոջ ամլության պատճառով մեկ այլ կին տուն բերելու երևույթը, այլադավանների հետ ամուսնության հարցը և այլն: Այսպիսի երևույթները, ինչպես տեսանք, խարխլում էին քրիստոնեական ընտանիքի հիմքերը և խիստ բարեկարգությունների կարիք ունեին: Ատենախոսության շրջանակում ուսումնասիրելով նախաքրիստոնեական և քրիստոնեական շրջանի ամուսնական հարաբերություններում

վերոհիշյալ երևույթների դրսևորումները՝ վեր են հանվել այդ երևույթներին առնչվող բազմաթիվ խնդիրներ, որոնց համար տրվել են լուծումներ: Վերընշյալ երևույթների դեմ Հայ առաքելական եկեղեցին պայքարել է եկեղեցական ժողովներին ընդունած կանոններով: Քրիստոնեության առաջին շրջանից սկսած հրավիրվել են եկեղեցական ժողովներ, որոնց նպատակն էր կարգ ու կանոն հաստատել հավատացյալների կյանքում: Այդ ժողովների կանոններն ընդգրկել են կյանքի բազմատեսակ ոլորտներ, որոնցում կարևորագույն տեղ էր զբաղեցնում ամուսնության հիմնախնդիրը: Հայոց եկեղեցական ժողովների կանոնախմբերի ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ ուսումնասիրությունը մեզ թույլ տվեց գալ այն եզրահանգմանը, որ չնայած որոշ բացթողումների, այդ կանոնները հիմնականում կարողացան բարեկարգել ամուսնական և ընտանեկան այնպիսի խնդիրներ, որոնք խոչընդոտ էին հանդիսանում ընտանիքի ճշմարիտ ընթացքին:

- Ատենախոսության առանձին ենթագլուխներում նկարագրվել են խնամախոսության և նշանադրության կանոնային և ժողովրդական դրսևորումները: Նշանադրությանն առնչվող կանոնների վերլուծությունը թույլ է տալիս հաստատուն կերպով ընդգծել եկեղեցու անմիջական միջնորդությունն ու մասնակցությունը ոչ միայն պսակի բուն արարողությանը, այլ նաև նշանադրության ծեսին: Եկեղեցին սահմանում է չափանիշներ ոչ միայն պսակի և ամուսնության խորհրդի իրագործման համար, այլև նշանադրության կատարման համար: Եվ այստեղ կարող ենք հավելել, որ այդ սահմանումները գրեթե նույն պահանջներն են ընդգրկում, ինչ որ ամուսնական սահմանումները, օրինակ՝ չափահասության տարիք, փոխադարձ համաձայնության պարտադիր առկայություն և այլն: Նշանադրության ծեսին վերաբերող ժողովրդական հատվածում ներկայացվում են Հայաստանի տարբեր գավառներում տարածված նշանդրեքի տեսակները (Ծաղկազարդի նշանադրություն, Վարդավառի նշանադրություն, «թոնրի նշան», «լուռ» նշանադրություն), և ազգագրական ուսումնասիրություններից պարզորոշվում է, որ նշանադրության արարողակարգում միանշանակ առկա են կրոնական ծիսական մոտիվներ: Բացի այդ, ժողովրդական ավանդական նշանը նույնպես պետք է օրինվեր քահանայի կողմից:
- Ատենախոսության ուսումնասիրության շրջանակում ներկայացված է նաև նախահարսանեկան և բուն հարսանեկան ծիսաշարն իր բազմաբնույթ ծիսական արարողակարգերով՝ տաշտադրեք, հարսանեկան հանդերձների օրհնություն, «հարս բաղնիք», «հարսնառ», օժիտի պատրաստություն և այլն: Այս և այլ սովորութային արարողություններն ամբողջացնում են հայկական ավանդական հարսանիքի մասին պատկերացումները: Առհասարակ, հարսանեկան տարբեր սովորույթների վերհանումը խիստ կարևոր ենք համարում հայկական ավանդույթների պահպանման տեսակետից:

- Ամուսնալուծությունը համարելով եկեղեցական պսակի ամենախնդրահարույց կողմերից մեկը՝ հայոց եկեղեցին իր կանոնական որոշումներով փորձել է կանոնակարգել այն՝ հստակ սահմանելով ամուսնալուծության համար թույլատրելի պայմանները: Ատենախոսության ուսումնասիրության շրջանակում հստակ երևում է, որ Գրիգոր Լուսավորչի ժամանակներից սկսած մինչև հայոց եկեղեցու պատմության նոր շրջանը՝ պատմիչների վկայություններում, տարբեր եկեղեցական ժողովների կանոններում, Կանոնագիք Հայոցում, միջնադարյան գործիչների դատաստանագրքերում, ինչպես նաև եկեղեցու նոր շրջանի գործիչների աշխատություններում, գրություններում ու կանոնադրություններում կան բազմաթիվ սահմանումներ ամուսնալուծության վերաբերյալ: Ողջ փաստական նյութի քննությունը ցույց է տալիս ամուսնալուծության հիմնախնդրի վերաբերյալ հայոց եկեղեցու մոտեցումները: Միջնադարյան հեղինակների դատաստանագրքերում տեղ գտած ամուսնալուծությանն առնչվող կանոնների շարքում հանդիպում են այնպիսիները, որոնք էապես տարբերվում են եկեղեցական ժողովների ընդունած կանոններից: Օրինակ փնթիության կամ անհնազանդության պատճառով կնոջը թողնելու կանոնները և այլն:
- Ամուսնական ավանդույթների և կանոնական իրավունքի համատեքստում այրի կանանց կարգավիճակի և նրանց իրավունքների հիմնահարցերի համակողմանի վերհանումն առանձնակի և կարևոր նշանակություն ունի: Ամուսնական տարաբնույթ հարցերի կողքին, որոնք հիմնականում քննարկվել են ներընտանեկան հարաբերությունների, կին և տղամարդ փոխահարաբերությունների շրջանակում, կարևորվել է այրիների ամուսնության խնդիրը: Ատենախոսության մեջ տեղ գտած փաստերի վերլուծությունը մեզ թույլ է տվել հստակ պատկերացում կազմել այրի կանանց վերաբերող ժողովրդական և եկեղեցահիրավական ընկալումների մասին:
- Ատենախոսության շրջանակում տեղ են գտել նաև եկեղեցու նոր շրջանի որոշ հոգևոր գործիչների կանոնադրություններ և սահմանումներ, որոնք կրկին անգամ վերաբերում են ամուսնական տարատեսակ հարցերի: Դրանց առկայությունը, վկայությունն է այն բանի, որ չնայած նախկինում սահմանված եկեղեցական օրենքներին, այնուամենայնիվ, որոշ արատավոր երևույթներ շարունակել են գոյատևել հասարակության շրջանում: Եկեղեցին իր բազմադարյա պատմության ողջ ընթացքում չի դադարել բավարարել հավատացյալների հոգևոր պահանջմունքները:
- Հայոց եկեղեցին վերոհիշյալ սովորույթների դեմ պայքարել է մեծ լայնախոհությամբ՝ իր դրույթները բխեցնելով սուրբգրային օրենքներից (հատկապես պետք է ընդգծել Պողոս առաքյալի ամուսնության վերաբերյալ սահմանումները), հայտնի եկեղեցական հայրերի տեսակետներից, Հայոց եկեղեցական ժողովների կանոնական որոշումներից, վաղ միջնադարյան, միջնադարյան հեղինակների կողմից մշակված օրենքներից և, ընդհանրապես, բազմակողմանի ու խորը քննության ենթարկելով ժամանակի

պահանջները, հետևելով քրիստոնեական բարոյականության սահմանումներին՝ լուծումներ է տվել ամուսնական սովորութային խնդիրներին: Այս ողջ պայքարը, ինչպես տեսանք, հատկապես միտված էր կնոջ դերի նորովի և առավել բարձրարժեք ընկալմանը:

- Քրիստոնեության սկզբնական շրջանում, մինչև օտար նվաճողների տիրապետության շրջանը, հայ կնոջ կարգավիճակը բոլորովին այլ է եղել: Նրա խոսքային և վարքային ձևերը չեն ենթարկվել այնպիսի խիստ սահմանափակումների, ինչպիսիք տեսնում ենք հետագա դարերում: Այդ ազատությունն ու անձնիշխանությունը ժամանակի ընթացում արտաքին տարբեր ազդակների հետևանքով փակուղի է մտել և հայ կնոջ համար ստեղծել է ինքնադրսևորման բավականին նեղ դաշտ:
- Հայ ավանդական ընտանիքի ներսում տեղ գտած ժողովրդական սովորույթների ուսումնասիրությունը թույլ տվեց ընդհանրական կարծիք ձևավորել հայ կնոջ կերպարի, դերի, նրա ընտանեկան հարաբերություններում դրսևորվելու ամբողջական պատկերի մասին: Նահապետական գերդաստաններով ապրելու սովորույթի, ավագության կարգի, կանանց չխոսկանության շրջանի, դրա հետ կապված ավանդազրույցների, ամուսին-կին, կին-երեխա, հարս-սկեսուր, հարս-սկեսրայր, քավոր-սանիկ փոխհարաբերությունների ուսումնասիրությունը մեր առաջ բացում է հայոց ամուսնաընտանեկան ավանդական բարքերի ողջ համայնապատկերը: Ինչպես տեսնում ենք, այդ ավանդական բարքերը շատ հաճախ բացասական ազդեցություն են ունեցել ընտանիքում կնոջ ինքնադրսևորման տեսանկյունից:
- Երեխայի ծննդյան հետ կապված ժողովրդական ավանդույթների ուսումնասիրության արդյունքում հստակ պատկերացումներ են ձևավորվում այն մասին, որ զավակ, և հատկապես արու զավակ ունենալու գաղափարը, հանդիսացել է հայկական ընտանիքի գլխավոր հիմնասյունը: Եվ եթե չի իրագործվել այս կարևորագույն առաքելությունը, շատ հաճախ խարխլվել են ընտանիքի հիմքերը, ինչի համար դրդապատճառ է հանդիսացել մեկ այլ կին տուն բերելու սովորույթը: Այս երույթի դեմ եկեղեցու դիրքորոշումն արտահայտվում էր նրանով, որ նմանատիպ միություններն անպսակ էին մնում:
- Որդեծնության գաղափարի չափազանց կարևորությունը և խոր արմատները հայոց մեջ ընդգծվել են ամլության դեմ պայքարի ժողվրդական դրսևորումներով: Ամլության պարագայում կանայք դիմում էին հնարավոր ամեն բանի զավակ ունենալու համար: Ազգագրական բավականին ծավալուն նյութի ուսումնասիրության և վերլուծության արդյուքնում հստակ եզրակացություններ արվեցին մայրության, որդեծնության, երեխայի դաստիարակության և սրանց առնչակից հարցերի ու խնդիրների վերաբերյալ: Բազմակողմանի քննության արդյունքում կրին անգամ ընգծվում են եկեղեցու մոտեցումներն ամուսնական այս հիմնախնդիրներին:

- Ամուսնաընտանեկան հիմնախնդիրները փոփոխվել են և քաղաքակիրթ պատկեր են ստացել՝ ըստ ժամանակների և հասարակական միջավայրի: Տարբեր ժամանակաշրջաններում ամուսնական խրթին փոխհարաբերություններում կանանց նկատմամբ վերաբերմունքը բխել է տվյալ ժամանակաշրջանի պահանջներից: Փաստական նյութի ուսումնասիրության արդյունքնում կարելի է եզրակացնել, որ կանացի դերակատարության արժեքային ողջ համալիրի ներկայիս մոտեցումները բավականին երկար պատմական զարգացման ժամանակաշրջան են անցել: Ազգագրական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ երիտասարդ հարսը իրավազուրկ կարգավիճակից տարիների ընթացքում դուրս է գալիս և արդեն մեծ մոր դերում ստանում իշխանություն՝ ընտանիքի մյուս անդամների նկատմամբ: Եվ, առհասարակ, հայ կինը դարերի պայքարի, ինչպես նաև ժամանակների թելադրանքի ու հասարակության զարգացման արդյունքում ձեռք է բերում բոլորովին այլ իրավամտածողություն և կարգավիճակ: Սրան իր մեծագույն նպաստն է բերել Հայ առաքելական եկեղեցին:
- Առկա աղբյուրագիտական աշխատանքների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս նկարագրվող կնոջ կերպարը՝ հայոց ազգաբանական և եկեղեցաիրավական հարցերի միասնական շրջագծում: Ազգային սովորույթների նկարագրություններին և դրանց բազմակողմանի քննությանը զուգահեռ ներկայացվում են Հայոց եկեղեցու իրավական մոտեցումները, և այս երկուսի համադրման ու համեմատական վերլուծության արդյունքում տրվում ամուսնաընտանեկան կյանքին առնչվող տարաբնույթ հարցերի պարզաբանումներ, որոնցում, իհարկե, առանձնակի շեշտադրում է արվել կանանց դերակատարությանը:
- Ելնելով տարաբնույթ աղբյուրների համեմատական վերլուծությունից՝ կարող ենք ասել, որ կնոջ առաքելությունը տարբեր է ներընտանեկան, ներազգային և ներեկեղեցական ավանդույթների համապատկերում: Հայոց եկեղեցին առանձնակի շեշտել է հայ կնոջ դերակատարությունն ընտանիքի պահպանման և, ըստ այդմ, ազգային ինքնության պահպանման գործընթացներում: Մատենագրական աղբյուրները, հիմնվելով քրիստոնեական գլխավոր սկզբունքների վրա, անդրադառնում են նաև կնոջ հատկանիշներին և կարևորում նրա՝ քրիստոնեական կյանքով ապրելու առաքինազարդ վարքը:
- Հայ Առաքելական Եկեղեցին, ժամանակի պահանջներից դրդված, իր ուսերին է վերցրել ամուսնական բազմատեսակ խնդիրների կարգավորման հարցը և ամուսնությունն առավել բարոյական հիմքերի վրա դնելու մեծ ջանքեր է գործադրել, ինչն էլ իր հերթին բխել է կանանց շահերից: Ուստի, հստակ կարելի է ընդգծել այն պնդումը, որ քրիստոնեությունն անգնահատելի ներդրում է ունեցել հայոց ամուսնական հարաբերություններում կնոջ դերի արժևորման հարցում: Եկեղեցին, մուտք գործելով այնպիսի բարդ ու փակ համակարգ, ինչպիսին ընտանիքն է, սահմանում է միջանձնային

հարաբերությունների բարձր մշակույթ, կրոնաբարոյական կայուն մոդելներ, արժեքային կողմնորոշումներ, որտեղ կենտրոնական տեղ են գրավում բարոյական օրենքն ու արժեքները, որոնք զգալիորեն դառնում են քրիստոնեական եկեղեցու մենաշնորհը: Եվ այս ըմբռնումների վրա կառուցված դիրքերից առաջին հերթին այն առանցքային բացահայտումն է արվում, որ բարոյական դիրքորոշումը սերտորեն առնչվում է հոգեկան առողջությանը:

- Այսպիսով՝ մարդկային հասարակությունը պետք է անցներ երկար ու բարդ ճանապարհ, որպեսզի զուգավորման կենսաբանական ակտից հասներ ամուսնության սոցիալական ինստիտուտի, որում կանանց նկատմամբ վերաբերմունքը կլիներ առավել արժեքային:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Հովհաննիսյան Հ., Դալլաքյան Լ.,** Հայ կնոջ կարգավիճակի փոփոխություններն ընտանեկան հարաբերություններում (կրոնագիտական ակնարկ), Հայաստանում կրոն-հասարակություն հարաբերությունների որոշ հարցեր (հոդվածների ժողովածու), Երևան, 2024, էջ 55-68:

2. **Դալլաքյան Լ.,** Ընտանիքի սուրբգրային ակունքները և կինն աստվածաշնչյան և մատենագրական աղբյուրներում, Հայաստանում կրոն-հասարակություն հարաբերությունների որոշ հարցեր (հոդվածների ժողովածու), Երևան, 2024, էջ 69-81-68:

3. **Դալլաքյան Լ.,** Մերձամուսնությունների խնդիրը հայոց եկեղեցական և սովորութային իրավունքի տեսանկյունից, Հայագիտության հարցեր հանդես, 2 (26), Երևան, 2022, էջ 128-137:

4. **Դալլաքյան Լ.,** Խնամախոսության և նշանադրության ավանդույթները հայոց մեջ, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, Ը, Երևան, 2022, էջ 151-170:

5. **Դալլաքյան Լ.,** Այրի կանանց կարգավիճակը հայոց եկեղեցական կանոնների և ժողովրդական ավանդույթների համատեքստում, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, Է, Երևան, 2022, էջ 125-139:

6. **Դալլաքյան Լ.,** Երեխայի ծնունդը հայոց կրոնական ու ժողովրդական ավանդույթների համապատկերում, Էջմիածին ամսագիր, Է, Ս. Էջմիածին, 2022, էջ 113-121:

7. **Դալլաքյան Լ.**, Չափահասության խնդիրն ամուսնության համատեքստում, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, Ե, Երևան, 2021, էջ 84-93:

8. **Դալլաքյան Լ.,** Կնոջ դերի ընկալումը ամուսնական հարաբերությունների համապատկերում (պատմական համառոտ ակնարկ), Էջմիածին ամսագիր, Բ, Ս. Էջմիածին, 2020, էջ 141-148:

9. **Դալլաքյան Լ.,** Հայ կնոջ և մայրական սկզբի քրիստոնեական և ժողովրդական ըմբռնումների հարցերի շուրջ, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, Ա, Երևան, 2019, էջ 133-141:

Даллакян Лиана Араиковна

АРМЯНСКАЯ ЖЕНЩИНА В КОНТЕКСТЕ БРАЧНЫХ ОБЫЧАЕВ (РЕЛИГИОВЕДЧЕСКИЙ АНАЛИЗ)

Резюме

Диссертация посвящена религиоведческому изучению роли, призвания, прав и обязанностей армянской женщины в брачно-семейных отношениях, а также другим важным вопросам. В результате рассмотрения и анализа армянского церковного канонического права и народных обычаев представлен весь комплекс женских ролей в семейных традициях армян.

В армянских национальных обрядах и церковно-правовом мышлении женщина рассматривается, главным образом, в контексте брака, семьи и материнства, что и стало предметом настоящей работы, основанной на целостном, многоаспектном и сопоставительном историко-источниковедческом, религиоведческом, культурологическом и церковно-правовом анализе.

Целью исследования является выявление представлений и систем ценностей относительно роли, прав, призвания и миссии женщины в семейно-брачных отношениях, а также тщательный анализ культурных особенностей рассматриваемого времени.

Семья и существующие в ней отношения во всей своей глубине всегда были и будут в центре внимания исследователей, поскольку это тот институт, где закладываются первые и самые фундаментальные основы формирования личности. С этой точки зрения изучение и анализ роли и функций женщины в семье имеют существенное значение, что весьма актуально сегодня, ибо особенно в наши дни образ женщины в супружеских отношениях зачастую утрачивает свои традиционные черты.

Работа состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы.

Во введении излагаются предмет диссертационного исследования, его цель и задачи, актуальность темы, методологическая основа исследования, научная новизна, степень проработанности темы и теория литературы, практическая значимость работы.

Первая глава диссертации **«Семейное положение армянских женщин в контексте канонического права»** состоит из 10 разделов. В ней рассматриваются различные вопросы семейного положения женщины с точки зрения армянского церковного права, браки между несовершеннолетними, межконфессиональные, принудительные, кровосмесительные браки, сватовство и помолвка, вопросы, связанные с единоженством и многоженством,

расторжением брака и статусом вдов. В ходе изучения исторических и церковно-правовых памятников проведен религиоведческий анализ вышеназванных проблем.

Вторая глава **«Женщина в контексте армянских народных брачных обрядов»** содержит 8 разделов и посвящена вопросам изменения статуса женщины в системе правовых обычаев армян.

Выполнен анализ таких важных проблем, как историческое развитие формирования семьи, необратимые последствия замужества в несовершеннолетнем возрасте, заключение браков при отсутствии взаимного согласия, традиционных обрядов сватовства, помолвки, венчания, вопросы, связанные с рождением и воспитанием детей.

Особого внимания заслуживают народные представления о статусе и правах вдов. В этом направлении рассмотрен ряд концептуальных вопросов.

В заключении подведены итоги диссертационного исследования, сформулированы основные выводы.

Общий объем работы составляет 176 страниц.

Dallakyan Liana Ara

ARMENIAN WOMAN IN THE CONTEXT OF MARITAL TRADITIONS (RELIGIOUS ANALYSIS)

Abstract

This dissertation is dedicated to the religious analysis of the role, calling, rights, obligations and other important issues of the Armenian woman in marital relations. As a result of the study and analysis of Armenian church canon law and folk customs, the entire complex of women's roles in Armenian marital traditions has been presented.

In Armenian national traditions and ecclesiastical law, women are mainly considered in the context of marriage, family and motherhood, which has become the axis of this dissertation, based on a religious, cultural and ecclesiastical law comprehensive and comparative analysis of historical sources.

The purpose of the research is to reveal the perceptions and value system of the role, calling and mission of a woman in marital and family relations, their rights, as well as a detailed analysis of the cultural peculiarities of the time.

The family and the prevailing relationships in all their depth have always been and will be relevant and important, since the family is the institution where the first and most radical foundations for the formation of a person are laid. From this perspective, the study and analysis of the role and functions of women in the family are important, which is extremely relevant today, especially in the sense that the image of women in marital relations often loses its clarity in contemporary times.

The candidate's dissertation consists of an introduction, two chapters, a conclusion and a list of used literature.

The introduction presents the subject, purpose and objectives of the dissertation, the relevance of the topic, the methodological basis of the research, the scientific novelty, the level of study of the topic and the theory of literature, the practical and applied significance of the dissertation.

The first chapter which is entitled **"The Marital Status of an Armenian Woman in the Context of Canon Law"**, is divided into 10 subchapters. This chapter examines various issues of the marital status of an Armenian woman from the perspective of Armenian church law: underage marriages, issues related to monogamy and polygamy, forced marriages, consanguineous marriages, marriages with people of other faiths, guardianship and engagement, divorce, and the status of widows. Within the framework of the study of historical and church-legal monuments, religious analyses related to the above-mentioned issues were given.

The second chapter is entitled **"A woman in the Context of Armenian Folk Marriage Traditions"**. This chapter consists of 8 subchapters, which present the changes in the status of an Armenian woman in marital relations from the perspective of Armenian customary law. Such issues as the historical development of family formation, the irreversible consequences of marriages of underage girls, the performance of marriages in the absence of mutual consent, guardianship, engagement and wedding ceremonies, various issues related to the birth and upbringing of children are subjected to critical analysis. Popular understandings of the status and rights of widowed women are especially valuable. Key substantive issues have been analyzed.

The main results and conclusions of the dissertation are summarized in the Conclusions section.

The total volume of the work is 176 pages.